

Արթուր Ղամբարյան

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ կառավարման ակադեմիայի իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ

«ԿՈՒՅՐ ՌԵՑԵՊՏԻԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ¹

Համառոտագիր

Հոդվածում վերլուծվում է Հայաստանի օրենսդրությունում արտասահմանյան քրեադատավարական ինստիտուտների անքննադատ յուրացման (ռեցեպցիայի) ֆենոմենը: Հեղինակն առանձնացնում է 2021 թ. ՀՀ Քրեադատավարական օրենսգրքի բարեփոխման երեք հիմնական սխալները:

1. Քրեական գործի հարուցման փուլից հրաժարվելը՝ գերմանական քրեական դատավարության մակերեսային ուսումնասիրության ազդեցությամբ: Չնայած փուլի վերացմանը՝ եվրոպական անալոգները (Գերմանիայում «նախաքննությունը» - *preddoznanie*) պահպանվել են: Սա հանգեցրել է քննիչների ծանրաբեռնվածությանը և նախաքննության որակի անկմանը:

2. «Կասկածյալի» կարգավիճակից հրաժարվելը: Բարեփոխումների ժամանակ անտեսվել է հետապնդվող անձի վերաբերյալ եվրոպայի քրեադատավարական համակարգերում գոյություն ունեցող տերմինաբանական տարբերակումը (օր.՝ Իտալիայում *indagato*, Իսպանիայում *investigado*): Գործնականում սա ստեղծել է հետապնդվող անձի իրավական կարգավիճակի անորոշություն: Նրանց վաղաժամ «մեղադրյալ» կոչելու հետևանքով նրանք ենթարկվում են ստիգմատիզացիայի:

3. Գործի կասեցման ինստիտուտի վերացումը: ՀՀ քննչական մարմինները և ՀՀ դատախազությունը «պասիվացված քրեական վարույթ» ինստիտուտի ներմուծմամբ փաստացի պահպանել են վարույթը կասեցնելու ինստիտուտը:

Նշվում է, որ քրեադատավարական բարեփոխումների ժամանակ նորմերն փոխառնվել են էկլեկտիկ ձևով, որի արդյունքում Հայաստանի քրեադատավարական համակարգում ընդգրկվել են սխալ կարգավորումներ, օրինակ՝ հանրահայտ փաստերը սխալմամբ համարվել են իրավական կանխավարկածներ:

Հեղինակը եզրակացնում է, որ քրեադատավարական քաղաքականություն մշակելիս անտեսվել են ազգային դատավարական ավանդույթները:

¹Հոդվածը ներկայացվել է 07.03.2025թ., գրախոսվել է 27.08.2025թ.:

Հիմնաբառեր- քրեական դատավարության բարեփոխում, համեմատական իրավագիտություն, քրեական գործի հարուցում, կասկածյալի կարգավիճակ, իրավական ավանդույթ:

Ներածություն

Սույն հոդվածում քննարկվում են այլ պետությունների դատավարական համակարգում առկա մոտեցումները ու կարգավորումները, առանց քննադատական վերլուծության՝ ՀՀ քրեադատավարական համակարգ կուրորեն ներմուծելու դեպքերը, դրանց պատճառներն ու հետևանքները²:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ-ում ընդունվել է Քրեական դատավարության երկու օրենսգիրք՝ մեկը 1998 թվականին, որն հիմնված էր ԱՊՀ մոդելային Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ քր. դատ. օր.) տրամաբանության վրա, իսկ երկրորդը՝ 2021 թվականին, որն հիմնականում հիմնված է Եվրոպական առանձին պետությունների (օրինակ՝ Մերձբալթյան երկրների, Գերմանիայի) քրեադատավարական օրենսդրության նորմերի (գաղափարկների) էկլեկտիկ ծաղկաքաղի վրա: ՀՀ նոր քր. դատ. օր.-ի էկլեկտիկությունը, գուցե, արտացոլում է պոստմոդերնին հատուկ ֆրագմենտարիզմը, սակայն դա ինքնին չի արդարացնում քրեադատավարական քաղաքականություն մշակելիս թույլ տված մեր անհեռատեսությունը:

ՀՀ քր. դատ. օր.-ի ընդունման գործընթացը սկսել է 2006 թվականից և տևել է մոտ 15 տարի: Թե ինչով էր պայմանավորված ՀՀ քր. դատ. օր.-ի այսքան ուշ ընդունումը, առանձին քննարկման հարց է, պարզապես նշենք, որ Քր. դատ. օր.-ը ցանկացած պետության երրորդ քաղաքական փաստաթուղթն է, քանի որ այն խտացված կերպով արտացոլում է երկրի քաղաքական ռեժիմի, «մարդ-պետություն» հարաբերությունների առանձնահատկությունները: Քր. դատ. օր.-ը՝ որպես քաղաքական փաստաթուղթ հաջորդում է սահմանադրությանը և ընտրական օրենսդրությանը: Հայաստանի իրավիճակում պարադոքսը այն է, որ ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ են արվել ավելի արագ (2005 և 2015 թվականներին) ՀՀ Սահմանադրությունը ներկայացվել է նոր խմբագրություններով, քան ՀՀ քր. դատ. օր.-ի ընդունում էր: Այդ ժամանակահատվածում ընդունվել է նաև ընտրական նոր օրենսդրություն:

Ինչ՞ու հայաստանի Հանրապետությունում ընդունվեց նոր ՀՀ քր. դատ. օր., արդյոք հնարավոր չէ՞ր Եվրոպական կոնվենցիան վավերացնելուց հետո առաջացած դատավարական խնդիրները լուծել 1998 թվականի ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություններ կատարելով կամ դատական պրակտիկան փոխելով³: Ցավոք

² Սույն հոդվածի հիմնական թեզիները ներկայացվել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում 2025 թվականի հունիսի 27-28-ին կազմակերպված XVII-րդ միջազգային գիտա-գործնական կոնֆերանսի պլենար նիստում:

³ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք ընդունելու անհրաժեշտության մասին պաշտոնական հիմնավորումներում նշվում են՝ 2002 թվականին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Եվրոպական կոնվենցիային միանալու և 2005 թվականին ՀՀ Սահմանա-

պատմական այդ ժամանակաշրջանում (2006–2021 թթ.) որևէ մեկը կասկածի տակ չի դրել նոր օրենսգիրք ընդունելու անհրաժեշտությունը, որևէ հարթակում չի քննարկվել գոյություն ունեցող խնդիրները «կենդանի» իրավունքի կամ ՀՀ քր. դատ. օր.-ում փոփոխություններ կատարելու ճանապարհով լուծելու տարբերակը: Այս հարցը ինքս ինձ չեմ տվել, երբ 2006թ. սկսած, որպես ՀՀ դատախազության ներկայացուցիչ, մասնակցում էի Օրենսգիրքը մշակող հանձնաժողովների աշխատանքներին: Այդ ժամանակահատվածում տպավորությունն այն էր, որ ՀՀ քր. դատ. օր. ընդունելու անհրաժեշտությունն անքննելի ճշմարտություն է, որը պետք է պարզապես կյանքի կոչել:

Հետադարձ հայացքով կարելի է պնդել, որ այն փոփոխությունները, որոնք կատարվել են ՀՀ քր. դատ. օր.-ում, առանց որևէ տեխնիկական բարդությունների կամ գաղափարախոսական էական խոչընդոտների կարող էին արտացոլվել նաև 1998 թվականի ՀՀ քր. դատ. օր.-ում: Հիշեցնեմ, օրինակ՝ 2007 թվականին ՀՀ քր. դատ. օր.-ում ներմուծվեց արագացված դատաքննության ինստիտուտը, որը ծագումով առավելապես անգլոսաքսոնական իրավական համակարգից է:

Ընդ որում այդ ժամանակաշրջանում իրավական քաղաքականություն մշակող սուբյեկտների մոտ գերակայում էր նաև այլ ոլորտներում նոր օրենսգրքեր ընդունելու մոտեցումը: Այդ ձգտումը պահանջում է բազմազործոն վերլուծություն, սակայն դրա պատճառներից մեկն ազգային իրավական ավանդույթներ ձևավորելու, դրանք խորացնելու և ամրապնդելու անհրաժեշտության գիտակցման բացակայությունն է: Անկախ Հայաստանում ո՛չ պաշտոնական, ո՛չ էլ ակադեմիական շրջանակներում առանձնապես չի արժևորվել քրեադատավարական ավանդույթներ ձևավորելու անհրաժեշտությունը, չի գիտակցվել դրանք պահպանելու արժեքը, չի հասկացվել, որ այդ ավանդույթներն ունեն կարգավորիչ պոտենցիալ և կազմում են ազգային քրեադատավարական ինքնության մասը, որը վճռական դեր է ունենում քրեադատավարական ոլորտում իրավակիրառողների անցնցում սերնդափոխության ապահովման և դատավարական մտածողության հաջորդականությունն ապահովելու գործում:

Այդ ժամանակաշրջանում նոր օրենսգրքեր ընդունելու իռացիոնալ ձգտման ամենավտանգավոր պատճառն առանձին իրավագետների, պաշտոնատար անձանց փառասիրությունն էր՝ սեփական անձը «կապել» այս կամ այն օրենսգրքի հետ: Պետականագիտական առումով նման մոտեցումը լուրջ վնաս է հասցնում անանձնական պետական ինստիտուտներ և ավանդույթներ ձևավորելու գործին: Օրինակ՝ 2013 թվականին նոր նշանակված ՀՀ արդարադատության նախարարը, այդ պահին շրջանառության մեջ գտնվող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծն ընդունելու գործընթացը շարունակելու փոխարեն, նախաձեռնեց ՀՀ վարչական դատավարության նոր

դրությունում փոփոխություններ կատարելու հանգամանքները: Տե՛ս ՀՀ կառավարության 10.03.2011թ. նիստի № 9 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի 1.3-1.4 կետերը: Էլեկտրոնային աղբյուրը՝ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=61628>

օրենսգիրք ընդունելու գործընթաց: Ակնհայտ էր, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները որակական առումով համակարգային կամ հայեցակարգային չէին, ուստի պետք է արտացոլվեին 2007 թվականին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում: Ամենայն հավանականությամբ նոր օրենսգիրք ընդունելու նախաձեռնության մեջ գերակայել է «նոր նախարար – նոր օրենսգիրք» մտածողությունը, որի մեջ քիչ դեր չունի «Նապոլեոնյան օրենսգիրք» արտահայտությունը սեփական անձի նկատմամբ կիրառելու հոգեբանական ախտաբանական ձգտումը:

Վերադառնանք քրեական դատավարությանը: Այլ պետությունների քրեադատավարական համակարգերից օրենսդրական դրույթներ, իրավական ինստիտուտներ կամ գաղափարներ փոխառնելու մեջ որևէ բացասական բան չկա, սակայն դա պետք է իրականացնել համեմատական իրավագիտության մշակած ճիշտ մեթոդաբանության հիման վրա⁴: ՀՀ-ում այլ պետությունների քրեադատավարական համակարգերից իրավական նորմեր և գաղափարներ փոխառնելիս (ռեցեպցիայի ենթարկելիս) թույլ են տրվել տարաբնույթ սխալներ: Սխալներից մեկը վերաբերում է նրան, որ այլ պետության օրենսդրությունից ՀՀ քր. դատ. օր.-ում արտացոլվեցին այնպիսի թերի կարգավորումներ, որոնք «դոնոր» պետության կողմից վաղուց ուղղվել էին, սակայն հայ մասնագետները չեն նկատել, որ այդ նորմերը ենթարկվել են օրենսդրական փոփոխությունների: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի (non bis in idem սկզբունքը) 6-րդ մասում սահմանված է.

«Եթե անձին դատապարտելիս պարզվում է, որ նույն արարքի համար նրա նկատմամբ կիրառվել է վարչական կամ կարգապահական պատասխանատվության՝ պատժին համարժեք **միջոց**, ապա նրա նկատմամբ պատիժ նշանակելու դեպքում **այն պետք է վերացվի** և հաշվի առնվի պատիժ նշանակելիս» (ընդգծումը՝ հեղ.):

ՀՀ քր. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի 6-րդ մասը պարունակում է կոպիտ սխալ, քանի որ քրեական մեղադրանք քննող դատարանին իմպլիցիտ լիազորում է վերացնել քրեական պատժին համարժեք վարչական տույժը (պատասխանատվության միջոցը): Մինչդեռ քրեական մեղադրանք քննող դատարանին վարչական ակտը վերացնելու լիազորություն վերապահելը չի համապատասխանում քրեական գործերով մասնագիտացած դատարանի օբյեկտիվ

⁴ Ողջունելի է, որ մեղադրյալի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ քրեական դատավարությունում ներդրվեց ցուցմունքների դատական դեպոնացման ինստիտուտը: Ռուսական դոկտրինում դրա փոխարեն քննարկում են մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը առերեսման միջոցով ապահովելու տարբերակը, սակայն քննչական գործողությունը (առերեսումը) կոչված է ոչ թե ապահովել մեղադրյալի իրավունքը, այլ նոր ապացույցներ հավաքելով լուծել ցուցմունքների հակասությունը: Այս մասին տե՛ս Гамбарян А.С., Симонян С. А. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. М.: Изд. Юрлитинформ. 2016, Гамбарян А. С., Судебное депонирование показаний: старый процессуальный институт под новым названием // Судебная власть и уголовный процесс. 2018. № 2. էջեր 184-198:

կարգավիճակին: Այս նորմը ՀՀ դատավարական համակարգ ներմուծվել է Լատվիայի քրեական դատավարությունից: Այսպես՝ մինչև 2013 թ. Լատվիայի քր. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված էր հետևյալ դրույթը.

«Եթե անձին դատապարտելիս պարզվում է, որ նույն արարքի համար նրա նկատմամբ կիրառվել է վարչական պատիժ, ապա այդ վարչական **պատիժը պետք է վերացվի** և հաշվի առնվի քրեական պատիժ նշանակելիս» (ընդգծումը՝ հեղ.):

Լատվիայի քր. դատ. օր.-ի այս հոդվածը գրեթե բառացի արտացոլվել է ՀՀ նոր քր. դատ. օր.-ում, սակայն տեքստի հեղինակները չեն նկատել, որ Լատվիայի քր. դատ. օր.-ի մեջբերված դրույթը 2013թ. ենթարկվել է էական փոփոխությունների: Այսպես՝ քր. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանվել է հետևյալ կերպ.

«Եթե անձին դատապարտելիս պարզվում է, որ նույն արարքի համար նրա նկատմամբ արդեն կիրառվել և կատարվել է պատիժ, ապա կրված քրեական պատիժը հաշվանցվում է (...), իսկ վարչական տույժը պետք է հաշվի առնվի նոր պատիժ նշանակելիս»:

Այսինքն՝ 2013 թ. փոփոխություններով Լատվիայի քր. դատ. օր.-ի 25-րդ հոդվածի 5-րդ մասից հանվել է քրեական դատարանի կողմից «վարչական պատիժը վերացնելու» մասին ձևակերպումը⁵:

Լատվիայի քր. դատ. օր.-ի առանձին դրույթների անքննելի և անվերապահ ռեցեպցիայի արդյունքում ՀՀ քր. դատ. օր.-ում ներառվել են օրենսդրական այլ սխալ դրույթներ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածը նվիրված է փաստերի իրավական կանխավարկածներին: Այս հոդվածը փոխառնվել է (որոշ սխալ թարգմանություններով) Լատվիայի քր. դատ. օր.-ի 125-րդ հոդվածից (փաստերի լեգալ կանխավարկածները⁶), որտեղ հանրահայտ փաստերը որակվել են որպես իրավական կանխավարկածի տեսակ: ՀՀ քր. դատ. օր.-ի 106-րդ հոդվածում ևս հանրահայտ փաստերը համարվել են որպես իրավական կանխավարկածի տեսակ:

Աղաղակող սխալ է, երբ հանրահայտ փաստը նույնացվում է իրավական կանխավարկածի հետ: Իրավական կանխավարկածը ենթադրություն է գոյություն չունեցող փաստերի մասին, իսկ հանրահայտ փաստը ոչ թե փաստի մասին ենթադրություն է, այլ՝ ականհայտորեն գոյություն ունեցող հանգամանք: Օրինակ՝ հանրահայտ է այն փաստը, որ գիշերը մութ է, կամ գիշերվան հաջորդում է ցերեկը: Այլ բան է, որ, որ հանրահայտ փաստերը իրենց հանրաժանոթ լինելու (հանրության լայն շրջանակին հայտնի լինելու) շնորհիվ չունեն ապացուցման

⁵Այս մասին տե՛ս Ղամբարյան Ա., Ղազարյան Ա. Քննչական ենթակայությունը և ընդդատությունը (գիտազործական մեկնաբանություններ), Եր.: Մազադաթ 2023, էջեր 82-87:

⁶ Անգլերեն տեքստում այն ձևակերպված է հոդվածի վերատառություն է «Legal Presumption of a Fact Legal Presumption of a Fact». <https://wipolex-res.wipo.int/edocs/lexdocs/laws/en/lv/lv043en.pdf>

կարիք, դրանք համարվում են ապացուցված: Թեև վարույթի մասնակիցները կարող են վիճարկել այդ փաստի՝ իրենց համար հայտնիությունը, սակայն այն վիճարկելու հնարավորությունը հանրահայտ փաստը չի դարձնում կանխավարկած: Պատահական չէ, որ մի շարք դատավարական համակարգերում հանրահայտ փաստերը որակվում են ոչ թե որպես իրավական կանխավարկածներ, այլ ներառվում են ապացուցման կարիք չունեցող հանգամանքների թվում (օրինակ՝ Վրաստանի քր. դատ. օր.-ի 73-րդ հոդված, Մոլդովայի քր. դատ. օր.-ի 98-րդ հոդված, ԱՊՀ մոդելային քր. դատ. օր.-ի 147-րդ հոդված):

Այժմ ներկայացնենք քրեադատավարական առավել մասշտաբային ինստիտուտների անքննադատ կամ «կույր ռեցեպցիայի» դեպքերը: Այդ երևույթը, որ հիմնականում պայմանավորված էր Հայաստանի քրեական դատավարությունը եվրոպականացնելու ցանկությամբ, տեղի ունեցավ այսպես կոչված «imitatio peregrina»-յի ոգով: Այս լատիներեն հասկացությունը (imitatio՝ նմանակում, peregrina՝ օտարերկրյա) նշանակում է օտար իրավական նորմերի (գաղափարների) մեխանիկական փոխառում՝ առանց ազգային իրավական ինքնությունը հաշվի առնելու, որի էությունը հայերենում ամբողջությամբ արտահայտվում է «օտարամոլություն» բառով:

««Կույր ռեցեպցիայի» առաջին օրինակը...»

1) Առաջին *imitatio peregrina*-ն վերաբերում է քրեական գործ հարուցելու փուլից հրաժարվելուն: 2006 թվականից հպարտությամբ և ոգևորությամբ հայտարարեցին քրեական գործ հարուցելու փուլից հրաժարվելու մասին: Այս հարցի շուրջ Հայաստանում առկա էր լայն կոնսենսուս⁷: Դժվար է հիշել որևէ մեկին, որ կոնցեպտուալ հարթությունում դեմ էր այդ փուլից հրաժարվելուն: Միայն ՀՀ ներքին գործերի նախարարության քննչական ստորաբաժանման ղեկավարն էր մտավախություն հայտնում քննիչների ծանրաբեռնվածության հնարավոր կրկնակի աճի մասին:

Քրեական գործ հարուցելու փուլն անկասկած ուներ թերություններ, սակայն դրանից հրաժարվելու գլխավոր պատճառն այն էր, որ այն խորհրդային քրեական դատավարությանը հատուկ ինստիտուտ է, իսկ եվրոպական երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի քրեական դատավարությունում նման փուլ նախատեսված չէ: Նշվում էր, որ Եվրոպայում ոստիկանությունը չի կարող հրաժարվել քննությունից, եթե առկա է հանցագործության մասին հաղորդում:

Այս պատմության հեգնանքն այն է, որ հետագայում պարզվեց, որ գերմանական քրեական դատավարության վերաբերյալ մեր դիտարկումները խիստ մակերեսային ու հատվածային էին (նույնիսկ փորձագետներ ներգրավելու պարագայում): Այսպես՝ ռուս դատավարագետ Ս. Կոնովալովը 2023 թվականին հրապարակեց մենագրությունը, որտեղից պարզ դարձավ, որ Գերմանիայի քր. դատ. օր.-ի տեքստում «քրեական գործ հարուցել» ձևակերպմամբ դատա-

⁷ St' u Gambarян A.C., Oганесян A. A. Возбуждение уголовного производства в проекте нового УПК РА // Библиотека криминалиста. 2014. № 1(12) էջեր 65-71:

վարական ֆորմալացված փուլ նախատեսված չէ, սակայն պրակտիկայում փաստացի գոյություն ունեն նմանատիպ վարույթներ (նախնական կասկածանքի փուլ կամ նախահետաքննություն - преддознание): Ավելին, նա փաստում է, որ անկախ գաղափարիների տարբերությունից՝ Ռուսաստանում և Գերմանիայում քրեական վարույթի սկիզբը որոշվում է գրեթե միանման: Ուստի քրեական գործի հարուցման փուլից հրաժարվելու առաջարկն հիմնավորելու համար Գերմանիայի օրինակի վրա հղում տալու հիմքերը բացակայում էին: Հեղինակը նաև նշում է, որ Գերմանիայի քրեադատավարական դոկտրինում ակտիվ քննարկվում է նախահետաքննությունը քրեական դատավարության լիարժեք փուլի կարգավիճակ տալու անհրաժեշտության մասին⁸:

Փաստն այն է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի քրեական գործի հարուցման փուլ (նյութեր նախապատրաստելու փուլ) նախատեսված չէ, սակայն դրանով Հայաստանի քրեական դատավարությունը չդարձավ Եվրոպական: Ինչ ունենք այսօր՝ քննիչը զբաղվում է հանցագործության մասին ցանկացած հաղորդմամբ, անկախ այդ հաղորդման բովանդակությունից, օրինակ՝ քննիչը դատավարական ռեժիմով պետք է զբաղվի հետևյալ բովանդակությամբ հաղորդումով՝ «ԱՄՆ նախագահ Բայդենը եկավ Հայաստան և իմ նկատմամբ բռնություն գործադրելով ինձ բռնաբարեց»: Քննիչը ՀՀ քր. դատ. օր.-ի հիման վրա պարտավոր է նման հաղորդման հիման վրա դատավարական փաստաթղթեր կազմել: «Հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ ամեն բան դառնում է քրեական դատավարության ռեժիմով լուծման ենթակա հարց: Դատախազների պահանջով ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում վերացվում են այսպես կոչված «երկրորդ մատյանները»:

Այսօր՝ քննիչների ծանրաբեռնվածությունը շեշտակի աճել է, որն բնականաբար բացասական կազդի նախաքննության որակի վրա: Դրան զուգահեռ՝ քրեական ոստիկանության աշխատակիցները գտնվում են գրեթե պարապուրդի վիճակում: Քննիչը չի կարող ոստիկանության աշխատակիցներին հանձնարարել կատարելու քննչական գործողություններ, օրինակ՝ չի կարող հանձնարարել, որ նրանք առգրավեն տեսաձայնագրող սարքերը: Քննիչը քննչական գործողություններ կատարելիս կարող է հետաքննության մարմնից ստանալ միայն աջակցություն: Այսօր ՀՀ քննչական կոմիտեի հաստիքների մոտ 20 տոկոս թափուր է, թեև քննիչի վարձրատրությունն էապես բարձրացել է:

Այսպիսով, ստացվում է, որ քրեական գործ հարուցելու փուլը կատարելագործելու փոխարեն իրավական քաղաքականության սուբյեկտները, անհետատեսության և եվրոպական փորձի մեր հատվածային իմացության պատճառով, հրաժարվեցին դեռևս խորհրդային ժամանակներից օրենսդրորեն ինստիտուցիոնալիզացված դատավարության այս փուլից: Մինչդեռ, եթե աշխարհաքաղաքական շահերից և հակասություններից վեր կանգնենք, ապա կարելի է նշել,

⁸ Ст'ю Ковалов С.Г. Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. М.: Изд. Городец, 2023. էջեր 22-23:

որ եվրոպական քրեադատավարական համակարգերի կատարելագործման նպատակով եվրոպացի դատավարագետներին չէր խանգարի, որ նրանք ուսումնասիրեն խորհրդային ծագում ունեցող քրեական գործի հարուցման փուլը:

««Կույր ռեցեպցիայի» երկրորդ օրինակը...»

2) Երկրորդ *imitatio peregrina*-ն վերաբերում է «կասկածյալ» սուբյեկտից հրաժարվելուն: Համեմատական քրեական դատավարությունում, կախված նրանից, թե օրենսդրությամբ հետապնդվող անձի համար արդյոք սահմանված է մեկ միասնական դատավարական կարգավիճակը, թե՛ այն տարբերակված է, առանձնացվում է երեք մոտեցում՝ ֆրանսիական, խորհրդային և գերմանական: Ֆրանսիայի 1958թվականի քր. դատ. օր.-ի նորմերում, որոնք կարգավորում են հետաքննությունը, կասկածյալի մասին հիշատակում չկա: Այս հասկացությունը մշակվել է միայն դոկտրինում: Գերմանական մոտեցման համաձայն՝ վարույթի ողջ ընթացքում հետապնդվող անձն օժտված է միասնական դատավարական կարգավիճակով: Կասկածյալի և մեղադրյալի տարբերակված կարգավիճակները հատուկ են խորհրդային մոտեցմանը⁹:

ՀՀ կառավարության կողմից 2011 թվականին հաստատված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի 2.15.-րդ կետում նշվեց «կասկածյալ» սուբյեկտից հրաժարվելու մասին և այն հիմնավորվեց «քրեական հետապնդման ենթարկված անձի համար միասնական դատավարական կարգավիճակ սահմանելու» անհրաժեշտությամբ: Հայեցակարգի այս ձևակերպումից պարզ է, որ Հայաստանում փորձ է արվել հրաժարվել կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակների տարբերակման խորհրդային մոտեցումից և դրա փոխարեն հիմք է ընդունվել հետապնդվող անձի միասնական կարգավիճակի մասին եվրոպական մոտեցումը:

Այո Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասի դատավարական օրենսդրությունում (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա) չկա մեր ընկալմամբ «կասկածյալ» տերմինի ճշգրիտ համարժեքը: Սակայն դա չի նշանակում, որ այդ համակարգերում չկան տարբեր անվանումներով հետապնդվող անձինք: Օրինակ՝ Իտալիայի քրեական դատավարությունում առկա է «indagato» (индага́то) անվամբ սուբյեկտ (*persona sottoposta alle indagini preliminari*): Ռուսական աղբյուրներում «indagato» սուբյեկտին անվանում են ոչ թե կասկածյալ, այլ քննության ենթակա անձ («подследственный»)¹⁰: Սա այն անձն է, որի դեմ ֆորմալ քննություն է տարվում: Այս կարգավիճակը ծագում է քննություն սկսելու մասին հայտնելու պահից (*notizia di reato*) մինչև մեղադրանք ներկայացնելը: Ընդ որում, "indagato" ձևակերպումը գործածվում է Իտալիայի քր. դատ. օր.-ի տեքստում (Օրի-

⁹ Ст'у Трефилов А. А. Уголовный процесс Швейцарии // Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). М.: «НИПКЦ Восход-А». 2016. էջեր 242-243:

¹⁰ Ст'у Барабанов П. К. Уголовный процесс Италии. М.: Изд. «Спутник +», 2019. էջեր 90-91:

նակ՝ Օրենսգրքի 289-րդ, 369-րդ, 415 bis հոդվածներում¹¹), սակայն այդ անձի կարգավիճակը ֆորմալացված (ինստիտուցիոնալիզացված) չէ:

Իսպանիայի քր. դատ. օր.-ում (Ley de Enjuiciamiento Criminal, LECrim) հետապնդվող անձի վերաբերյալ, կախված նրանից, թե նա ինչ իրավական վիճակում է գտնվում, գործածվում են տարբեր տերմիններ՝ «մեղադրյալ» (inculpado) (ստ. 368), «մեղադրյալ» (presunto culpable) (ստ. 371), «քննության ենթակա անձ» (подследственный, procesado) (ստ. 373), «մեղադրյալ» (reo) (ստ. 448), «անձ, որին մեղաազրվում է պատժելի արարք» (persona a quien se imputa un acto punible) (ստ. 486), «պատասխանող» (querellado) (ստ. 272), «մեղադրյալ» (acusado) (ստ. 687), «քննության ենթակա անձ» (investigado) (ստ. 771):

Իսպանացի դատավարագետները նշում են, որ տերմինաբանական այս բազմազանությունը դարձել է բազում խնդիրների պատճառ, քանի որ անորոշ է, թե որ տերմինը որ ժամանակ պետք է գործածել: Այս խնդիրը լուծելու համար օրենսդիրը 13/2015 օրգանական օրենքով նախատեսել է երկու հասկացություն՝ քննության ենթակա անձ ("подследственный") և մեղադրյալ: Ընդ որում անձը ձեռք է բերում մեղադրյալի կարգավիճակ, երբ դատական մարմիններն ներկայացնում են պաշտոնական մեղադրանք: Տերմինաբանական այս փոփոխության պատճառներից մեկն էլ այն, որ «մեղադրյալ» բառն ավելի բացասական է ազդում անձի համբավի վրա, ուստի այն կարող է գործածվել դատարան ուղարկելուց հետո¹²:

Ինչ վերաբերում է Գերմանիայի քրեական դատավարությանը, ապա այդ երկրում թեև հռչակվում է հետապնդվող անձի դատավարական կարգավիճակի միասնականության գաղափարը, սակայն գերմաներենում հետապնդվող անձի վերաբերյալ գործածվում է չորս տարբեր տերմիններ (*Verdächtiger*, *Beschuldigter*, *Angeschuldigter*, *Angeklagter*)¹³: Օրինակ՝ «*verdächtiger*» (Ֆերդեխտիգեր), որը ի տարբերություն «*beschuldigter*» (բեշուլդիգտեր), ոչ պաշտոնական տերմին է և նշանակում է անձ, ում նկատմամբ կան անուղղակի կասկածանքներ (օր.՝ ոստիկանության նախնական ստուգման փուլ): «*Verdächtiger*»: տերմինը գործածվում է հիմնականում ոստիկանության զեկույցներում:

Մեր քրեադատավարական ավանդույթների մեջ գերակայել է ոչ թե նյութական, այլ ֆորմալացված կասկածանքի (մեղադրանքի) գաղափարը: Պատահական չէ, որ մեզ համար խորթ է հնչում այն, որ գերմանական դոկտրինում առանձնացվում է մեղադրյալի երկու ընկալում՝ լայն իմաստով մեղադրյալ և բառի բուն իմաստով

¹¹ Codice di procedura penale. Testo del D.P.R. 22 settembre 1988, n. 447. https://www.polpenuil.it/attachments/048_codice_di_procedura_penale.pdf

¹² Ст'я Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Изд. «Спутник +», 2021. էջ 86:

¹³ «*Verdächtiger*» - «կասկածյալ», որի դեմ առկա են հանցանք կատարելու կասկածներ, «*Beschuldigter*» - «մեղադրյալ», որի դեմ իրականացվում է քրեական վարույթ, «*Angeschuldigter*» - «մեղադրյալ», որի դեմ հարուցվել է հանրային մեղադրանք, այսինքն՝ դատախազությունն այդ մեղադրանքը փոխանցել է դատարան, սակայն դատաքննությունն ըստ էության դեռ չի սկսվել, «*Angeklagter*» - «ամբաստանյալ», որի նկատմամբ դատարանը որոշում է կայացրել դատաքննություն սկսել:

մեղադրյալ¹⁴: Նման մոտեցումը ավելի է խորացնում հետապնդվող անձի կարգավիճակի նույնականացման անորոշությունը:

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ հետապնդվող անձանց կարգավիճակների տարբերակման խորհրդային համակարգերում տարբերակված են ոչ այնքան կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծավալը (դրանք բովանդակային առումով հիմնականում նույնական էին), որքան կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու հիմքերը (ապացուցվածության ստանդարտները) և դատավարական ընթացակարգերը: Այսինքն՝ նույնիսկ խորհրդային մոտեցումով կասկածյալի և մեղադրյալի կարգավիճակները բովանդակության առումով հիմնականում համընկնում էին:

Այնուամենայնիվ, հետապնդվող անձի դատավարական կարգավիճակի միասնականության «եվրոպական» գաղափարը Օրենսդրին չի հաջողվել ամբողջությամբ կյանքի կոչել, քանի որ ՀՀ քր. դատ. օր.-ում «կասկածյալ» սուբյեկտի փոխարեն նախատեսվել է «ձերբակալված անձ» սուբյեկտը, որի կարգավիճակը ինստիտուցիոնալիզացված (ֆորմալացված) է՝ օրենքով սահմանված են նրա իրավունքները և պարտականությունները, նախատեսված է ձերբակալված անձի ցուցմունքի առանձին տեսակ (ՀՀ քր. դատ. օր.-ի 110-րդ հոդված): Ձերբակալված անձի դատավարական նորմեր նախատեսելը ինքնին նշանակում է, որ Օրենսդիրը չի հասել և չէր էլ կարող հասնել հետապնդվող անձի կարգավիճակի միասնականության գաղափարի իրականացմանը¹⁵:

Այսպիսով՝ սեփական իրավական ավանդույթներն անտեսելու և եվրոպական մոտիվներով դատավարական լուծումների փնտրտուքների արդյունքում հրաժարվեցինք օրենսդրորեն ֆորմալացված (ինստիտուցիոնալիզացված) «կասկածյալ» սուբյեկտից:

Գործնականում ինչ հետևանքներ կասկածյալից հրաժարվելու օրենսդրի մոտեցումը: Հայ դատավարագետների մեծ մասը կասկածյալից հրաժարվելու հանգամանքով պայմանավորված պնդում է, որ էապես իջել է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմը: Դա նշանակում է, որ օրինակ, եթե նախկինում համապատասխան հիմքերի (փաստական տվյալների) առկայության դեպքում անձին տրվում էր կասկածյալի կարգավիճակ, ապա ներկայումս այդ նույն պայմաններում նրան պետք է տալ մեղադրյալի կարգավիճակ: Մինչդեռ ՀՀ դատախազությունը շարունակում է միայն բավարար ապացույցների համակցություն ունենալու դեպքում անձի նկատմամբ պաշտոնական հետապնդում հարուցելու նախկին պրակտիկան: Դատախա-

¹⁴ St'u Бойльке В. Уголовно-процессуальное право ФРГ. 6-е издание. Пер. с нем. Красноярск, 2004. էջ 78:

¹⁵ Ներպետական հարթությունում «կասկածյալ» սուբյեկտից հրաժարվելու գլխավոր պատճառը քրեական հետապնդում հարուցելու դատախազի լիազորությունը՝ որպես նրա բացառիկ (միայն նրա կողմից իրականացվող) լիազորություն դիտարկելու հայեցակարգն է: Այս մոտեցումը բացառում է հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից ձերբակալման կամ այլ եղանակով անձին կասկածյալի կարգավիճակ (հետապնդում հարուցելու) տալու հնարավորությունը:

զության այս մոտեցման համար հիմք է ծառայում այն, որ ՀՀ քր դատ օր-ի 189-րդ հոդվածի 4-րդ մասում ուղիղ նշված է, որ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ նշվում են (...) մեղադրանքի փաստական հիմքը՝ մեղսագրվող արարքի էությունը, կատարման տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են առկա ապացույցներով:

Այս ամենի բացասական հետևանքն այն է, որ անձը, որի նկատմամբ փաստացի իրականացվում է քրեական հետապնդում, տևական ժամանակ մնում են անորոշ կարգավիճակում:

Թերևս քրեադատավարական օրենսդրության բարեփոխումների ժամանակաշրջանում պետք էր մտածել ոչ թե կասկածյալից հրաժարվելու, այլ մինչդատական վարույթում հետապնդվող անձի նկատմամբ հանրային ընկալման և անմեղության կանխավարկածի տեսանկյունից հնարավորինս չեզոք տերմին ընտրելու մասին: Հատկապես այսօրվա թվայնացված հասարակությունում այս հարցն առավել սուր է դրված: Մինչդատական վարույթում, երբ դեռևս հայտնի չէ, թե գործն արդյոք կուղարկվի դատարան, թե ոչ, անթույլատրելի է հետապնդվող անձի նկատմամբ «մեղադրյալ» տերմինի գործածությունը: Հասարակության ընկալմամբ «մեղադրյալ» հասկացությունը «կասկածյալ» եզրույթի համեմատ առավել կոշտ (ստիգմատիզացիոն) ազդեցություն թողող արտահայտություն է:

««Կույր ռեցեպցիայի» երրորդ օրինակը...»

3) Մենք հրաժարվել ենք նաև նախաքննության ժամկետներից և մինչդատական վարույթը կասեցնելու ինստիտուտից: Ներկայումս ՀՀ քր դատ օր-ում նախատեսված են քրեական հետապնդման ժամկետները և դրանք կասեցնելու մասին կարգավորումներ: Արևմտյան Եվրոպայի երկրների դատավարական օրենսգրքերի տեքստերում նախաքննությունը կասեցնելու մասին նորմեր, ըստ մեր տվյալների, նույնպես նախատեսված չեն:

Այս պարագայում հայկական քննչական և դատախազական պրակտիկան չի ճանաչել ենթադրյալ հանցանք կատարած անձի անհայտ լինելու հիմքով քրեական վարույթը կասեցնելու ինստիտուտից հրաժարվելու մասին Օրենսդիրի մոտեցումը: ՀՀ դատախազությունը և ՀՀ քննչական երկու մարմինները ձևավորել են միասնական պրակտիկա, որով փաստացի պահպանվել է վարույթը կասեցնելու ինստիտուտը: Այսպես՝ ՀՀ քննչական մարմինների ղեկավարների լոկալ իրավական ակտերով սահմանվել են՝ ակտիվացված և պասիվացված վարույթի տեսակները: Եթե բոլոր ապացուցողական գործողությունները կատարելուց հետո չի հայտնաբերվել հետապնդման ենթակա անձը, ապա քննիչը կազմում է վարույթը պասիվացնելու մասին տեղեկանք և վարույթի նյութերը ուղարկում է հսկող դատախազին՝ օրինականությունը ստուգելու:

Այսպիսով՝ դատախազական և քննչական պրակտիկան իր պրագմատիկ խնդիրները լուծելու, մասնավորապես՝ քննչական և դատախազական աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար ըստ էության պահպանել են վարույթը կասեցնելու նախկին ինստիտուտը: Ակտիվացված և պասիվացված վարույթների

մասին լուրջ իրավական ակտերը և ձևավորված կայուն պրակտիկան թեև չի համապատասխանում ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը, սակայն այն համարվում է ՀՀ քրեադատավարական իրավունքի մաս, քանի որ այն ճանաչվել է ոչ միայն ՀՀ քննչական մարմինների, այլ նաև՝ ՀՀ դատախազության կողմից:

Եզրակացություն

Քրեադատավարական քաղաքականությունն մշակելիս և իրականացնելիս ազգային քրեադատավարական ավանդույթների արժանիքների նկատմամբ ցուցաբերվել է վառ արտահայտված թերհավատություն: Հետագայում պարզվեց, որ դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված մի շարք դատավարական ինստիտուտներ, եթե դիտարկվեն քաղաքական ավտորիտառ ռեժիմի կապանքներից զատված, ապա դրանք եվրոպական դատավարական համակարգերի համեմատությամբ նույնիսկ ունեն որոշ առավելություններ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Ղամբարյան Ա., Ղազարյան Ա. Քննչական ենթակայությունը և ընդդատությունը (գիտագործական մեկնաբանություններ), Եր.: Մազադաթ 2023, 240 էջ:
Ghambaryan A., Ghazaryan A. «Investigative Jurisdiction and Justiciability (Scientific-Practical Commentary)». Yerevan: Magaghat, 2023, 240 pp.
2. Барабанов П. К. Уголовный процесс Италии. М.: Изд. «Спутник +», 2019. 467 с.
Barabanov P. K. «Criminal Procedure of Italy». Moscow: Sputnik +, 2019. 467 pp.
3. Барабанов П.К. Уголовный процесс Испании. М.: Изд. «Спутник +», 2021. 382 с.
Barabanov P.K. «Criminal process of Spain». Moscow: Sputnik +, 2021. 382 pp.
4. Бойльке В. Уголовно-процессуальное право ФРГ. 6-е издание. Пер. с нем. Красноярск, 2004. 352 с.
Boehlke W. Criminal Procedural Law of the Federal Republic of Germany. 6th edition. Per. with German. Krasnoyarsk, 2004. 352 pp.
5. Гамбарян А.С., Оганесян А. А. Возбуждение уголовного производства в проекте нового УПК РА // Библиотека криминалиста. 2014. № 1(12). С. 65-71.
Ghambaryan A.S., Hovhannisyan A. A. «The initiation of criminal proceedings in the draft of the new CPC of the Republic of Armenia», Library of criminalist, 2014. № 1(12). pp. 65-71.
6. Гамбарян А.С., Симонян С. А. Судебное депонирование показаний в современном уголовном процессе. М.: Изд. Юрлитинформ. 2016. 160 с.
Ghambaryan A.S., Simonyan S.A. «Judicial deposition of testimony in the modern criminal process». Moscow, Yurlitinform. 2016. 160 pp.
7. Гамбарян А.С. Судебное депонирование показаний: старый процессуальный институт под новым названием // Судебная власть и уголовный процесс. 2018. № 2. С.184-198.
Ghambaryan A.S. «Judicial deposition of testimony: the old procedural institute under a new name», Judicial power and criminal procedure. 2018. № 2. pp.184-198.
8. Головки Л.В. Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции. М., 1995. 130 с.
Golovko L.V. «Inquest and preliminary investigation in the criminal process of France». Moscow, 1995. 130 pp.
9. Коновалов С.Г. Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. М.: Изд. Городец, 2023. 192 с.
Konovalov S.G. «Post-Soviet reforms of pre-trial proceedings in the light of German procedural institutions». Moscow, Gorodets, 2023. 192 pp.
10. Трефилов А. А. Уголовный процесс Швейцарии // Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15). М.: Изд. «НИПКЦ Восход-А». 2016. 1039 с.
Trefilov A. A., «Criminal process of Switzerland». Criminal process of foreign countries. Volume 1 (15). Moscow, «НИПКЦ Восход-А». 2016. 1039 pp.

Artur Ghambaryan

Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law at the Russian-Armenian University, Doctor of Juridical Sciences, Professor, Professor at the Chair of Law of the Academy of Public Administration of the Republic of Armenia, Honored Lawyer of the Republic of Armenia, Member of the Editorial Board of the Scientific-Practical Journal "Legality" of the RA Prosecutor's Office

**"BLIND RECEPTION" IN ARMENIA'S CRIMINAL PROCEDURE POLICY:
CAUSES AND CONSEQUENCES¹⁶**

Abstract

The article analyzes the phenomenon of uncritical reception of foreign criminal procedural institutions into Armenian legislation. The author identifies three key mistakes of the 2021 CPC reform:

1. Abolition of the stage of initiation of criminal proceedings under the influence of superficial study of the German process. Despite the abolition of the stage, the European analogs ("precognition" in Germany) remain. This has led to overloading of investigators and a decrease in the quality of investigation.

2 Elimination of the status of "suspect" in favor of a "single procedural status" on the European model. The reform ignored terminological differentiation in Europe (e.g. indagato in Italy, investigado in Spain). In practice, this created legal uncertainty and stigmatization of persons prematurely referred to as "accused".

3. Abolition of the institution of suspension of the case. In fact, RA investigative bodies restored them through "passivized proceedings" that contradict the CPC.

The eclectic nature of the reform is criticized, for example: the erroneous identification of common facts with presumptions (Article 106 of the CPC of the RA).

The author concludes: ignoring national procedural traditions (including Soviet institutions purified from ideology) led to systemic failures.

Keywords: reform of criminal procedure; comparative jurisprudence; initiation of criminal proceedings; suspect status; legal tradition.

¹⁶ The article was presented on 07.03.2025 and was reviewed on 27.08.2025.

Артур Гамбарян

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского (Славянского) Университета, доктор юридических наук, профессор, профессор Академии государственного управления Республики Армения, заслуженный юрист Республики Армения, член редакционной коллегии научно-практического журнала “Законность” Прокуратуры РА

**«СЛЕПАЯ РЕЦЕПЦИЯ» В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЙ
ПОЛИТИКЕ АРМЕНИИ: ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ¹⁷**

Абстракт

В статье анализируется феномен некритической рецепции зарубежных уголовно-процессуальных институтов в законодательство Армении. Автор выделяет три ключевые ошибки реформы УПК РА 2021 г.:

1. Отказ от стадии возбуждения уголовного дела под влиянием поверхностного изучения немецкого процесса. Несмотря на упразднение стадии, европейские аналоги (“преддознание” в Германии) сохраняются. Это привело к перегрузке следователей и снижению качества следствия.

2. Ликвидация статуса “подозреваемый” в пользу “единого процессуального статуса” по европейскому образцу. Реформа игнорировала терминологическую дифференциацию в Европе (например, *indagato* в Италии, *investigado* в Испании). На практике это создало правовую неопределённость и стигматизацию лиц, преждевременно именуемых “обвиняемыми”.

3. Упразднение института приостановления дела. Фактически следственные органы РА восстановили их через “пассивированные производства”, противоречащие УПК.

Критикуется эклектичный характер реформы, например: Ошибочное отождествление общеизвестных фактов с презумпциями (ст. 106 УПК РА).

Автор заключает: игнорирование национальных процессуальных традиций (включая советские институты, очищенные от идеологии) привело к системным сбоям.

Ключевые слова: реформа уголовного процесса; сравнительное правоведение; возбуждение уголовного дела; статус подозреваемого; правовая традиция.

¹⁷ Статья была представлена 07.03.2025 и прошла рецензирование 27.08.2025.